«Հաստատում եմ»
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի
Ուսումնամեթոդական գծով պրոռեկտոր
Լիլիթ Մկրտչյան

« 6 հուլիսի» 2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՔ

ՀԱՅՑՈՐԴ՝ ՏԱԹԵՎԻԿ ԶԱՎԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

Ի.Բ.00.01-Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Տաթևիկ Զավենի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի **արդիականությունը** հիմնավորված է երեխաների խնամազրկության երևույթի պատմական և արդի հիմնախնդիրներով: Վերջին տասնամյակների գիտական իրավաբանական, հոգեբանական, սոցիոլոգիական հետազոտությունները փաստում են, որ երեխաները ընկալվում են որպես առանձնահատուկ սոցիալական խումբ: հատկապես հաշվի առնելով ոչ միայն իրենց անձի ձևավորման, զարգացման սոցիալականացման օբյեկտ (կրող) լինելը, այլ մասնակցային ընդգրկվածությունը այդ գործընթացներին: Այս երևույթը, ըստ էության, փաստում է, որ երեխաների դրական կենսափորձը ձևավորվում է մի շարք սոցիալական, հոգեբանական, քաղաքական, տնտեսական և այլ գործոնների ազդեցության ներքո: Թեմայի արդիականությունը հիմնավորված է նաև սոցիալական կապիտալի մեթոդաբանության կիրառությամբ ուսումնասիրվող երևույթի նկատմամբ:

Ընտանեկան խնամագրկության հիմնախնդիրը ժամանակակից հասարակություններում ունի բարձր սոցիալական արդիականություն և դառնում է կիրառական սոցիոլոգիայի կարևորագույն ուսումնասիրության ոլորտներից մեկը: Վերջին տասնամյակներին սոցիալական, տնտեսական, ռազմական ու մշակութային փոփոխությունների և սոցիալական անհավասարությունների աճի խորացումը նպաստել են նաև մի իրավիճակի ստեղծմանը, որի ընթացքում և արդյունքում մեծ թվով երեխաներ զրկվում են կենսաբանական ընտանիքի ինստիտուցիոնալ կամ լատենտ խնամքից՝ հայտնվելով պետության կամ այլ սոցիալական ինստիտուտների հոգածության ներքո:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Երեխաներ, նրանց որպես հասարակության լիարժեք անդամ ձևավորման, սոցիալական նորմերի և արժեքների յուրացնող, ընտանեկան դաստիարակության, ընտանեկան խնամագրկության երևույթները մշտապես գտնվել են մանկավարժների, փիլիսոփաների, հոգեբանների, սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Հեղինակի կողմից իրականացվել է մասնագիտական գրականության խորը վերլուծություն թեմային համապատասխան դասական և ժամանակակից տեսաբանների հայեցակարգերի, այնպես էլ կիրառական սոցիոլոգիայի էմպիրիկ հետազոտողների, միջազգային կազմակերպությունների զեկույցների և հաշվետվությունների տվյալների համեմատական վերլուծություն: (Օգտագործված գրականության ցանկը կազմում է 116 անուն)

Ատենախոսության գիտական դրույթների հիմնավորվածությունն ապահովվում է բարձր բացատրողական ներուժ ունեցող և ակադեմիական հանրության կողմից լայնորեն ճանաչված սոցիոլոգիական հայեցակարգերի, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության շրջանակներում կիրառվող տեղեկատվության ձեռք բերման քանակական և որակական մեթոդների համադրությամբ:

Ատենախոսության **կառուցվածքը** համապատասխանում է ՀՀԿԳՆ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափանիշներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 216 էջ, ներառյալ աղյուսակները և գծագրերը:

Ատենախոսության առաջին գլխում *Երեխաների խնամազրկության ուսումնասիրման տեսամեթոդական մոտեցումները* վերլուծաբար ներկայացվել են «երեխա», «մանկություն», «խնամք», «խնամազրկություն» հասկացությունների մեկնաբանությունները դասական և արդի տեսությունների ներքո: Ենթագլուխներում համեմատական վերլուծությամբ ներկայացվել են երեխայի որպես սոցիալական խմբի առանձնահատկությունները կենսաբանական, իրավաբանական, սոցիալական հարաբերությունների հարացույցների սահմաններում: Հեղինակի կողմից երեխան դիտարկվում է որպես կենսաբանական և հոգեբանական զարգացման որոշակի փուլում գտնվող անհատ, իրավունքներ կրող սուբյեկտ և սոցիալական հարաբերություններում մասնակցաբար ներգրավված անձ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես երեխայի ձևավորման գործընթացում ընտանիքի, համայնքի և սոցիալական ինստիտուտների ազդեցությանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ *Սոցիալական կապիտալը որպես երեխաների խնամազրկության վերլուծական շրջանակ* նվիրված է սոցիալական կապիտալի տեսաբանների՝ Պիեր Բուրդիեի, Ջեյմս Քոուլեմանի, Ռոբերտ Փութմանի հայեցակարգերի վերլուծություն, որպես հասարակության մեջ ընտանեկան, համայնքային, սոցիալական կապերի, հարաբերությունների և համագործակցության դրսևորում: Հեղինակը իր վերլուծության շրջանակներում հատկապես շեշտադրում է սոցիալական կապիտալի որպես ռեսուրս դիտարկման հնարավորությունները, նրա դրական և բացասական կողմերը:

Հաջորդիվ Տ. Կարապետյանը կատարում է սոցիալական կապիտալի ներգրավվածությունը մանկության սոցիոլոգիայի և հատկապես երեխաների առօրյա փոխազդեցությունների, կրթական, ընկերական և համայնքային միջավայրում մասնակցության երևույթների ու գործընթացների վերլուծություն, ինչով և հիմնավորվում է երեխաների և նրանց միջավայրի փոխհարաբերությունների նշանակալիության հիմնավորվածության հարցը: Ըստ հեղինակի սոցիալական կապիտալի տեսությունը հատկապես կիրառվել է բացատրելու վստահության, փոխադարձության, սոցիալական աջակցության և սոցիալական ռեսուրսների հասանելիության խնդիրները երեխաների բարեկեցության և սոցիալական պաշտպանության կազմակերպման և իրականացման հարցում:

Ատենախոսության երրորդ գլուխը իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունն է, ուղղված *երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի և սոցիալական կապիտալի փոխառնչություններին հայաստանյան հասարակությունում*: Էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանական հիմք հանդիսանում է կոնստրուկտիվիստական գիտաճանաչողական մոտեցումը, որի շրջանակներում ստացած տվյալները իմաստավորվում են հետազոտող, մասնակիցներ և սոցիալական համատեքստի փոխազդեցության շնորհիվ (Զարմազ): Տվյալների հավաքագրման համար կիրառվել է որակական և քանակական մեթոդաբանությունների համադրություն Case study մոտեցում (239 դեպք, որոնցից ընտրվել է 11 տիպային դեպք), կիսաձևայնացված բաց հարցերով հարցազրույցներ ոլորտի առանցքային տեղեկատուների և երեխաների հետ ազատ հարցումների շրջանակներում:

Կիսաձևայնացված հարցաթերթիկային հարցումն ուղղված էր ընտանեկան խնամքից զրկված կամ ռիսկային գոտում գտնվող երեխաների հետ աշխատող մասնագետներին, որի արդյունքում վերհանվեցին հիմնախնդիրները բաց մասնակիցներին ընկալումների, ընտանեկան խնամքից երեխաների դուրս մնալու դրդապատճառները, Հայաստանյան իրականությունում խնամազրկության գործընթացային առանձնահատկությունները, սոցիալական կապիտալի տեսակների ընտանեկան, երեխաների և համայնքային ազդեցությունը խնամազրկության գործընթացի վրա և այլն: Ստացած տվյալները վերլուծվել են JASP ծրագրային փաթեթի միջոցով և շեշտը դրվել է «Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոնի» արխիվային փաստաթղթերի վերլուծության վրա:

Ատենախոսության ուսումնասիրությունների արդյունքները պարունակում են կարևոր նորույթներ և կարող են կիրառվել կարիքահեն և գիտելիքահեն ընտանիքի խնամքից զրկված երեխաների կարիքների բավարարման և հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված երեխաների պաշտպանության քաղաքականության բարեփոխման համար: Հեղինակի կողմից իրականացված հետազոտության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հասկացությունային դաշտի գիտականահեն վերլուծությունը, հասկացությունների հետագա կոդավորման և օպերացիոնալացման նպատակով (Տես ատենախոսության 3.2 ենթագլուխը):

Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքները հիմք են հանդիսանում Տ.Կարապետյանի կողմից առաջադրված մի շարք **նորույթներ**.

1) Առաջին անգամ առաջադրվել և հիմնավորվել է երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի սոցիոլոգիական մեկնաբանության հայեցակարգ, որի շրջանակում խնամազրկությունը դիտարկվում է որպես սոցիալական կապիտալի դինամիկան արտացոլող գործընթաց:

2) Մշակվել և տեսականորեն հիմնավորվել է խնամազրկության գործընթացային մեկնաբանությունը՝ տարբերակելով **«խնամազրկություն»** հասկացությունը որպես սոցիալական գործընթաց և **«ընտանեկան խնամքից զրկված երեխա»** հասկացությունը որպես այդ գործընթացի հնարավոր արդյունք՝ սոցիալական կարգավիճակ:

3) Առաջարկվել է երեխաների **խնամազրկության դասակարգման մոդել**, որում առանձնացվել են դրա բացահայտ, լատենտ, բրոնիկ, ընտրողական, ինչպես նաև նորմատիվորեն լեգիտիմացված և ինստիտուցիոնալ ձևերը:

4) Գիտական շրջանառության մեջ են ներմուծվել **«անտեսանելի ծնող»**, **«դե ֆակտո խնամազրկություն»** և **«միջանցքում հայտնված երեխաներ»** հասկացությունները՝ խնամազրկության այն ձևերի նկարագրման համար, որոնք ամբողջությամբ չեն արտացոլվում գործող իրավական և վարչական դասակարգումներում:

5) Առաջադրվել և հիմնավորվել է ընտանիքի հարաբերություններում հոգատարի իրականացման **կառուցվածքային առկայության և գործառութային բացակայության պարադոքսը**, որը բնութագրում է այն իրավիճակները, երբ ծնողը ֆորմալ դերերը պահպանում է իր դերը, սակայն չի իրականացնում երեխայի խնամքի, պաշտպանության, հուզական աջակցության և սոցիալականացման հիմնական գործառույթները, ինչը ձևավորում է լատենտ խնամազրկության դրսևորումները:

6) Մշակվել է խնամող-խնամվող հարաբերությունների գործընթացային դինամիկան նկարագրող մոդել, որը ներառում է սոցիալական կապերի թուլացման, խաթարման, բայքայման և խզման փուլերը՝ որպես խնամազրկության ձևավորման

վերիկապակցված աստիճաններ: Առաջարկվել է այդ աստիճանների հայեցակարգային տարբերակումը:

7) Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է ընտանեկան սոցիալական կապիտալի միջնորդող դերը երեխաների խնամազրկության գործընթացում, այսինքն՝ ապացուցվել, որ սոցիալական ռիսկերի ազդեցությունը հաճախ իրականացվում է ընտանեկան հարաբերությունների փոփոխության միջոցով:

8) Էմպիրիկ ուսումնասիրությամբ հիմնավորվել են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի, սոցիալական ռիսկերի կուտակման և երեխաների խնամազրկության հիմքերի, բնույթի ու գործընթացային ուղիների միջև առկա կապերը:

Նորույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից նշված 6 գիտական հոդվածներում:

Բարձր գնահատելով ատենախոսի կողմից կատարված աշխատանքը՝ ներկայացնում ենք որոշ նկատառումներ և առաջարկություններ.

- Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից տեսական հիմնավորումներում լուսաբանվեր ոչ միայն կապվածության հարաբերությունների բացահայտմանն ուղված գիտական աշխատանքների վերլուծություն, այլև հատուկ անդրադարձ կատարվեր ծնողական կամ ցանկացած տիպի ներընտանեկան հոգացության շրջանակներում «սիրո» բաղադրիչի վերլուծությանը, որպես ընտանեկան խնամքից զրկվածության հիմք:
- Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից տեսական հիմնավորումներում իրականացվեր ընտանիքի սոցիոլոգիայի ավելի խորքային վերլուծությունում, որում ներառվեին նաև ՀՀ-ում իրականացված սոցիոլոգիական տեսական և էմպիրիկ հետազոտությունները:
- Հաշվի առնելով Հայաստանյան սոցիալական խնդրահարույց վիճակը՝ ներառյալ երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում, ցանկալի կլիներ՝ որ հեղինակը իրականացներ նաև վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն իր ուսումնասիրության օբյեկտի և առարկայի վերաբերյալ ավելի բազմակողմանի պատկեր ստանալու համար:

...տանքը կշահեր, եթե իրականացված էմպիրիկ հետազոտության մեջ որպես մեթոդ կիրառված որակական հարցումներում ընդգրկված ռեսպոնդենտների խոսքերից վերլուծության շրջանակներում մեջբերումներ լինեին:

- Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը իրականացներ ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական պաշտպանություն իրականացնող ՀԿ-ների և ՊՈԱԿ-ների գործառնության վերաբերյալ տվյալների երկրորդական սոցիոլոգիական վերլուծություն, համեմատելով իր հեղինակային հետազոտության արդյունքների հետ (Օրինակ՝ ՍՈՍ մանկական գյուղեր, Գյումրիի Երեխաների Տուն, Երեխաների և ընտանիքների աջակցության Երևանում գործող 3 ՊՈԱԿ-ները, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ և այլոք):

Այս դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության շրջանակներում Տ. Կարապետյանի կողմից կատարված աշխատանքի գիտական արժեքը և կարող են հիմք հանդիսանալ թեմայի հետագա ռաումնասիրությունների և հետազոտական աշխատանքների համար: Նորույթները և հետազոտության հիմնական արդյունքները տպագրվել են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից արտոնագրված գիտական ամսագրերում: Սեղմագիրը պարունակում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, պաշտպանությանը ներկայացված հիմնական դրույթները և կարևոր արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տաթեվիկ Կարապետյան Զավենի «Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի սոցիոլոգիական վերլուծություն» ԻԲ 00.01 Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն: Նրանում ներկայացվող եզրակացություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում երեխաների պաշտպանության ոլորտում խնամազրկության երևույթի կանխարգելման և ռիսկերի վերհանման ռազմավարություններ մշակելիս: Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, ուստի միջնորդում ենք ԵՊՀ-ի

013 Փիլիսոփայության և սոցիոլոգիայի Մասնագիտական խորհրդին Տաթևիկ Զավենի Կարապետյանին շնորհել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ԻԲ. 00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի 03.07.2026թ. նիստում (արձանագրություն թիվ 12), որին մասնակցել են Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ժ/պ՝ հ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Խաչիկյանը, ս.գ.թ. Ս.Ժ.Եղիազարյան, տ.գ.թ., Գ.Բ.Նալբանդյանը, փ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Ջիջյանը, դոցենտ Ա. Եսայանը, դասախոսներ՝ Լ.Ա.Ռաշոյանը, Գ.Ա. Ասատրյանը, Ս.Հ. Շմավոնյանը, Ն.Ս. Մելքոնյանը, քարտուղար՝ Մ.Կ. Ղարիբյան:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի
ամբիոնի վարիչի ժ/պ՝ հ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Խաչիկյան

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի
ֆակուլտետի դեկանի ժ/պ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Հ. Պետրոսյան

Գ. Ա. Խաչիկյանի և Ռ. Հ. Պետրոսյանի
ստորագրությունները հաստատում եմ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական քարտուղար, մանկ.գ.դոցենտ Հ. Վ. Թադևոսյան
07.07.2026թ

06.07.2026թ